Խաղալիքը պետք է լինի ամուր, քանի որ երեխաները դրանք հաճախ դնում են բերանը, կրծում են, գցում հատակին, նստում դրանց վրա: Խաղալիքն օգտագործելուց առաջ հարկավոր է լվանալ:

Տիկնիկների, կենդանիների նախատիպերով փափուկ խաղալիքների աչքերը, որոնք պատրաստվում են ապակուց կամ պլաստմասսայից, կարող են կոտրվել ու վնասել նրան: Երեխան կարող է դրանք կուլ տալ կամ փորձել մտցնել քիթը, ականջը: Վտանգավոր են համարվում նաև մանր մասնիկներից հավաքված և լարովի խաղալիքները: Պետք է հետևել, որպեսզի երեխայի ձեռքում չհայտնվեն խաղալիքների առանձին մետաղական մասեր, քանի որ նա կարող է դրանք մտցնել էլեկտրական վարդակի (շտեպսել) մեջ: Փխրուն խաղալիքներն ընկնելուց, երեխայի կծելուց կամ հարվածներից կարող են կոտրվել և, ձեռք բերելով սուր ծայրեր, վնասել նրան:

Սույն հրատարակությունը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ի կողմից՝«Թույներից զերծ մանկական խաղալիքներ հայ երեխաների համար» ծրագրի շրջանակներում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, 0019 Երևան, Բաղրամյան պող. 24դ, 609 սենյակ
Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 52 36 04
էլ. փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am

“Эко-Согласие" - www.ecoaccord.org | IPEN - www.ipen.org

Վնվտանգ խաղալիք՝ առողջ մանկություն

Երևան 2012

Պատկերացնել երեխայի կյանքն առանց խաղալիքի՝ գրեթե անհնար է: Ի՞նչ խաղալիք ենք նվիրում մեր սիրելի փոքրիկին, արդյո՞ք լրջությամբ ենք վերաբերվում խաղալիքի ընտրությանը:

Հարգելի ծնողներ,

զգուշացե՛ք, քանի որ Հայաստանում վաճառվող խաղալիքների մի հսկայական մասի անվտանգությունը երաշխավորված չէ: Այսինքն, միանգամայն հնարավոր է, որ դրանց օգտագործումից վտանգվի ձեր երեխաների առողջությունը:

Մեր երկրում խաղալիքների ներկրման, արտադրության և իրացման ոլորտում իրավիճակը, մեղմ ասած, մխիթարական չէ: Ոչ վաղ անցյալում Հայաստան ներկրվող խաղալիքներն օրենքով պարտադիր պետք է ունենային համապատասխանության սերտիֆիկատ, որը նշանակում էր, որ նմուշառված օրինակը համապատասխանում է Հայաստանում գործող տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին: Հակառակ դեպքում, խմբաքանակը չպետք է ներկրվեր:

Վերջերս կառավարությունը պարզեցրել է խաղալիքների մուտքը Հայաստան՝ դրանք հանելով սահմանին պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքատեսակների ցանկից, ինչն էլ նպաստավոր պայմաններ է ապահովում ներկրված խաղալիքներն առանց վերահսկողության իրացնելու համար:

Խաղալիքների ընտրությունն առաջին հայացքից հեշտ է թվում: Մինչդեռ, այս հարցում պետք է լինենք աչալուրջ և հետևողական, քանի որ սխալ ընտրության պատճառով կարող ենք վնասել երեխայի առողջությունը:

Այսօր հայաստանյան շուկան հեղեղված է բազմազան խաղալիքներով և ժամանցային խաղերով, որոնք մեծ մասամբ ներկրված են և գերակշռողը չինական արտադրության էժանագին և կասկածելի որակով խաղալիքներն են:

Մինչդեռ մասնագետները խորհուրդ են տալիս նախապատվություն չտալ էժանագին խաղալիքներին, քանի որ դրանք հիմնականում պարունակում են առողջության համար վտանգավոր նյութեր և հաճախ չեն համապատասխանում պահանջվող չափօրինակներին (ստանդարտներ): Հատկապես պետք է ուշադրություն դարձնել ռետինե և պլաստմասսայե խաղալիքներին, որոնք կարող են պարունակել ֆտալատներ, քիմիական վտանգավոր միացություններ, ծանր մետաղներ:

<<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> հասարակական կազմակերպության կողմից ծնողների, մանկապարտեզների դաստիարակների և վաճառողների հետ անցկացրած հարցումները ցույց են տվել, որ մարդիկ մեծ մասամբ անտեղյակ են խաղալիքների անվտանգությանը ներկայացվող պահանջներից, չեն կարևորում խաղալիքի ոչ պիտակի, ոչ էլ որակի համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Ծնողները հիմնականում նախընտրում են գնել ներկրված խաղալիքներ, սակայն դժգոհում են դրանց, հատկապես՝ չինական արտադրության խաղալիքների որակից:

Ոմանք դժգոհում են սուր հոտի առկայությունից, մյուսները՝ հեշտությամբ կոտրվելուց:

Հայաստանում նմուշառված 68 խաղալիքի մոտ 20 %-ը պարունակում է առնվազն 1 ծանր մետաղ, որի խտությունը գերազանցում է սահմանային թույլատրելի խտությունը: Ամենից հաճախ հանդիպող խնդիրներից է խաղալիքներում կապարի բարձր պարունակությունը:

Հողում, որի վրա քայլում են երեխաները, կապարի թույլատրելի խտությունը 32 (մգ/կգ) է, իսկ ստուգված մանկական խաղալիքներում, որոնք երեխաները հաճախ կարող են դնել բերանը, այն տատանվում էր 32 մգ/կգ - 12 140 մգ/կգ սահմաններում, այսինքն, մոտ 350 անգամ գերազանցում էր թույլատրելի խտությունը: Տոքսիկ մետաղներ պարունակող խաղալիքների մեծ մասն արտադրված է Չինաստանում: Այնուամենայնիվ, վտանգավոր խաղալիքներից երկուսը հայկական արտադրության խաղալիքներ են:

Խաղալիքը խորհուրդ է տրվում գնել ոչ թե շուկաներից և պատահական վայրերից, այլ մասնագիտացված խանութներից: Այսպիսի խանութներում խաղալիքները, թեև ավելի թանկ են, սակայն, որպես կանոն, ունենում են համապատասխանության սերտիֆիկատ: Առավել նախընտրելի է գնել մեկ անվտանգ խաղալիք, քան նույն գումարով՝ մի քանի էժան, անորակ և վտանգավոր խաղալիք:

Խուսափեք գնել հոտավետ խաղալիքներ: Ռետինե կամ պլաստմասսայե փափուկ և ճկուն մասերով խաղալիքները (գնդակներ, տիկնիկներ, զանազան կենդանիներ), որոնք նախատեսված են մինչև վեց տարեկան փոքրիկների համար, հաճախ պարունակում են ֆենոլ, ֆորմալդեհիդ և այլ թունավոր նյութեր: Դրանք կարող են երեխաների մոտ ուժեղ ալերգիա առաջացնել և դառնալ արցունքահոսության, հազի կամ բրոնխների սպազմի պատճառ: Դա հատկապես վտանգավոր է, եթե փոքրիկը քնելիս նման խաղալիքները պահում է իր կողքին:

Խաղալիքը պետք է համապատասխանի երեխայի տարիքին, որի մասին պիտակի վրա պետք է լինի համապատասխան նշում:

Պիտակի վրա անպայման պետք է գրված լինի ոչ միայն նախատեսված տարիքը, այլև արտադրողի անունը, հասցեն և հեռախոսահամարը: Ներկրված խաղալիքի վրա պարտադիր է հայալեզու մակնշման և անվտանգության նշանի առկայությունը: